6 սեպտեմբերի 2018 թվականի N 977 - Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածում.

ա. «0721 Պարենամթերքի տեխնոլոգիա» բաժնից հանել

«

0721.02.4	Շաքարի արտադրության տեխնոլոգիա	0721.02.01.4	Օպերատոր՝ շաքարի արտադրության գոլորշիացման կայանքի	3	1
		0721.02.02.4	Օպերատոր՝ շաքարի հյութի դեֆեկոսատուրացիոն գործընթացի	3	1
		0721.02.03.4	Օպերատոր՝ շաքարի արտադրության դիֆուզիոն գործընթացի	3	1

»

տողերը.

բ. «0721.06.4 Ձկնեղենի վերամշակման տեխնոլոգիա» տողից հանել

«

0721.06.02.4	Օպերատոր՝ ձկնամթերքի ծխահարման սարքավորման	3	1

»

տողը.

գ. «0721.07.4 Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» տողում՝

ա) հանել

«

0721.07.01.4	Օպերատոր՝ պաստերացման սարքավորման	3	1
0721.07.02.4	Օպերատոր՝ չոր կաթնային մթերքների արտադրության սարքավորումների	3	1
0721.07.03.4	Օպերատոր՝ սուբլիմացիոն գործընթացի սարքավորման	3	1
0721.07.04.4	Օպերատոր՝ յուղի, պանրի և կաթի արտադրության գոլորշիացման և խտացման սարքավորումների	3	1

»

տողերը,

բ) «0721.07.07.4 Օպերատոր՝ թթվակաթնային և մանկական կաթնային մթերքների արտադրության» բառերը փոխարինել «0721.07.07.4 Կաթնաթթվային կաթնային մթերքներ պատրաստող» բառերով,

գ) «0721.09.4 Ճարպայուղային արտադրության տեխնոլոգիա» տողից հանել

«

0721.09.02.4	Օպերատոր՝ յուղերի և ճարպերի բյուրեղացման կայանքի	3	1

».

տողը.

դ. «0811 Պտղաբուծություն և անասնապահություն» բաժնում.

ա) «անասնապահություն» բառը փոխարինել «անասնաբուծություն» բառով,

բ) «0811.03.4 Թռչնաբուծություն» տողում «ֆերմաների» բառը փոխարինել «համալիրների» բառով,

գ) «0811.05.4 Բուսաբուծություն» տողում «Բանջարաբույծ» բառը փոխարինել «Բուսաբույծ» բառով.

ե. «1041 Տրանսպորտային ծառայություններ» բաժնում

«

1041.03.4	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում	1041.03.01.4	Փականագործ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների	3	1

»

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

1041.03.4	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում	1041.03.01.4	Փականագործ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների	3	1
		1041.03.02.4	Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար	3	1

».

2) որոշման N 2 հավելվածում.

ա. «0411 Հաշվապահություն» բաժինը «0411.01.5 Հաշվապահական հաշվառում» բառերից հետո լրացնել «(ըստ ճյուղերի)» բառերով.

բ. «0413 Կառավարում և վարչարարություն» բաժինը «0413.01.5 Մենեջմենթ (Կառավարում)» բառերից հետո լրացնել «(ըստ ճյուղերի)» բառերով.

գ. «0612 Տվյալների բազաների և տեղեկատվական ցանցերի ստեղծում և կառավարում» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«

0612.04.5	Համակարգերի տեսություն	0612.04.01.5	Համակարգաբան	4	3	

».

դ. «0715 Մետալուրգիա և մեքենաշինություն» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«

0715.15.5	Սառնարանային տնտեսություն	0715.15.01.5	Տեխնիկ՝ սառնարանային տնտեսության	4	3	

».

ե. «0721 Պարենամթերքի տեխնոլոգիա» բաժնում

«

0721.10.5	Մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	0721.10.01.5	Տեխնոլոգ՝ մանկական և ֆունկցիոնալ սննդի արտադրության	3,5	2,5	3,5

»

տողը փոխարինել՝

«

0721.11.5	Ծխախոտի աճեցման և վերամշակման տեխնոլոգիա	0721.11.01.5	Տեխնոլոգ՝ ծխախոտի աճեցման և վերամշակման	3	2	3

»

տողով.

զ. «0811 Ագրոնոմիա և անասնաբուծություն» բաժնում.

ա) «0811.06.5 Պահպանված գրունտի կենսատեխնոլոգիա» տողում «Պահպանված» բառը փոխարինել «Պաշտպանված» բառով,

բ) «0811.07.5 Անասնաբուժություն» տողում «0811.06.01.5» թվերը փոխարինել «0811.07.01.5» թվերով,

գ) «0811.08.5 Անասնաբուծություն» տողում «0811.07.01.5» թվերը փոխարինել «0811.08.01.5» թվերով,

դ) «0811.09.5 Մեղվաբուծություն» տողում «0811.08.01.5» թվերը փոխարինել «0811.09.01.5» թվերով,

ե) «0811.10.5 Շնաբանություն (կինոլոգիա)» տողում «0811.09.01.5» թվերը փոխարինել «0811.10.01.5» թվերով,

զ) «0811.11.5 «Վայրի կենդանիների վերարտադրություն» տողում «0811.10.01.5» թվերը փոխարինել «0811.11.01.5» թվերով.

է. «0831 Ձկնային տնտեսություն» բաժնից հանել

«	0831.02.5	Արդյունաբերական ձկնորսություն	0831.02.01.5	Ձկնորս	3	2	3 »

տողը.

ը. «1015 Զբոսաշրջություն» բաժինը «1015.01.5 Զբոսաշրջություն» բառերից հետո լրացնել «(ըստ ճյուղերի)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ